ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 45.11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ (ԳՐԱՎՈՐ) ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ Հունան Տեր-Վարդանյանի, անդամներ՝ Արա Զոհրաբյանի, Արսեն Համբարձումյանի, Լիանա Հակոբյանի, Մարգարիտա Զալիբեկյանի, Արմինե Ֆանյանի և Գառնիկ Թուխտարյանի

հաշվի առնելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց որակավորման քննությունների գրավոր փուլի ամփոփման անհրաժեշտությունը,

նկատի ունենալով առարկայական քննական հանձնախմբերի անդամների կողմից որակավորման քննության գրավոր առաջադրանքները ստուգելու հանգամանքը,

հիմք ընդունելով Հանձնաժողովի անդամների կողմից կատարված գնահատականները՝ ըստ ծածկագրերի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 45.11-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 98-րդ կետի պահանջներով, միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Ամփոփել «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության հավակնորդի 2025թ. մայիսի 16-ին տեղի ունեցած որակավորման քննությունների առաջին փուլի արդյունքները՝ գնահատելով իրավական խնդիրներ և հայցադիմում կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ամփոփել «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց՝ քրեական ուղղվածության հավակնորդի 2025թ. մայիսի 16-ին տեղի ունեցած որակավորման քննությունների առաջին փուլի արդյունքները՝ գնահատելով իրավական խնդիրներ և դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքը՝ համաձայն հավելված 2-ի:

Որոշում N 3/2-Ա
11 հունիսի 2025թ.

3. Տեղադրել սույն որոշման հավելվածները Պալատի կայքում և փակցնել՝ Պալատի 4-րդ հարկում գտնվող ցուցատախտակի վրա:

4. 2025թ. հունիսի 11-ին ժամը 17[30]-ին ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեում գտնվող Պալատի շենքի 4-րդ հարկի մեծ դահլիճում բացել կնքված արկղը և հանել ծածկագրերի թերթիկները:

5. Սահմանել, որ կնքված արկղը կբացվեն Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի այլ անդամի կողմից:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի նախագահ՝
Հունան Տեր-Վարդանյան

Որոշում N 3/2-Ա
ք. Երևան
11 հունիսի 2025թ.